# ՀՀ պետական համակարգը

## Ազգային բանակը

Հայոց անկախ պետականության կայացման ամենազորեղ կռվաններից մեկն էլ ազգային բանակն էր: Հանրապետության ղեկավարությունը և հասարակական–քաղաքական շրջանակները քաջ գիտակցում էին Հայաստանի աշխարհաքաղաքական բարդ իրավիճակը: Ոչ բարեկամ հարևանների առկայությունը՝ մի կողմից, տարածաշրջանը մեծ տերությունների հետաքրքրությունների ու շահերի բախման օբյեկտ լինելը՝ մյուս կողմից, և դրան գումարած՝ հուսալի դաշնակիցների բացակայությունը ինքնըստինքյան հուշում էին, որ նորանկախ Հայաստանի պետական ու ազգային անվտանգության միակ



հուսալի երաշխիք կարող էր լինել սեփական լավ պատրաստված, կարգապահ ու մարտունակ ազգային բանակը:

Ինչպես հայտնի է, հայկական զինվորական խմբերը սկսել էին ձևավորվել տակավին Առաջին աշխարհամարտի տարիներին՝ հանձինս հայկական 8 կամավորական ջոկատների և դրանց վերակազմավորումից հետո՝ հայկական 6 կանոնավոր ազգային հրաձգային գումարտակների[87]: Վերջիններս հետագայում 1917 թ. ամռան–աշնանը, կազմեցին նոր ձևավորվող հայկական ազգային բանակային զորակազմի հիմքը: Այդ գործընթացն ավելի որոշակիացավ արդեն 1917 թ. նոյեմբերից, երբ ռուսական բանակի գերագույն հրամանատարության հրամանով սկսեց ձևավորվել հայկական բանակային զորակազմը, որը Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար գեներալ Ե. Լեբեդինսկու հրամանով 1918 թ. մարտի 1–ից վերակառուցվեց առանձին հայկական բանակային զորակազմի: Վերջինիս հրամանատարը գեներալ Թ. Նազարբեկյանն էր, իսկ շտաբի (սպայակույտի) պետը՝ գեներալ Ե. Վիշինսկին: Հայկական զորքի կոմիսարը սկզբում Դրոն էր, այնուհետև՝ Հակոբ Զավրյանը, ապա՝ Սարգիս Մանասյանը: Առանձին հայկական կորպուսը կազմված էր երկու դիվիզիայից, մեկ հեծյալ բրիգադից, պահեստի ուժերից, արևմտահայերից ստեղծված զորամիավորումից: Առաջին դիվիզիայի հրամանատարը գեներալ Միքայել Արեշյանն էր, երկրորդինը՝ գեներալ Մովսես Սիլիկյանը, պահեստային զորամիավորմանը՝ գեներալ Ա. Տեր–Հակոբյանը, հեծյալ բրիգադինը՝ գնդապետ Ն. Ղորղանյանը, իսկ արևմտահայերից կազմված հայկական հատուկ հարվածային ջոկատը գլխավորում էր դերակալ–գեներալի կոչում ստացած Անդրանիկը: 1918 թ. մարտի 1–ի դրությամբ հայկական բանակային զորակազմն ուներ 26 533 զինվոր ու սպա[88]:

Որքան էլ բարձր գնահատվի 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի համաժողովրդական բնույթը, այդուհանդերձ, մարտական գործողությունների առումով առանձին հայկական զորակազմն իր ուսերի վրա կրեց պատերազմի ողջ ծանրությունը՝ հսկայական դերակատարություն ունենալով Հայաստանի անկախության գործում: Հայաստանի անկախության հռչակումից և Բաթումի հաշտության պայմանագրից հետո հայկական զորակազմի հիմքի վրա աստիճանաբար կազմավորվեց Հայաստանի Հանրապետության բանակը:

Մինչ Հայաստանի կառավարությունը կժամաներ Երևան և ձեռնամուխ կլիներ հայկական ազգային բանակի կազմավորման գործին, հայկական զորախմբերի ստեղծման գործում նշանակալի դեր են կատարել Թիֆլիսի Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդը (նրա զինվորական բաժանմունքը), արևմտահայերի ազգային խորհուրդը (արևմտահայ բյուրոն) և նրա ստեղծած պաշտպանության մարմինը, ինչպես նաև Երևանի Հայոց ազգային խորհուրդը և անձամբ Երևանի դիկտատոր Ա. Մանուկյանը: Վերջինս 1918 թ. մարտ–հուլիս ամիսներին իր ձեռքն էր վերցրել ամբողջ նահանգի պետական, այդ թվում և ռազմական (զինվորական) գործերը:

Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության ձևավորման սկիզբը դրվեց հունիսի 15–ին՝ գեներալ Հ. Հախվերդյանին նախարար նշանակելու օրվանից: Հիմնվեցին վարչական մարմին և զինվորական շտաբ՝ երեք ստորաբաժանումներով՝ դրասենյակ, վերահսկիչ և զորահավաքի: Արդեն 1918 թ. հուլիսի երկրորդ կեսին Հանրապետության կառավարության՝ Երևան ժամանումից հետո, ամբողջ թափով ծավալվեց բանակային շինարարությունը:

Ինչպես արդեն նշվել է, Բաթումի հաշտության պայմանագրից և կից երեք հավելված-

87 Տե՛ս Կարապետյան Մ., Հայկական կամավորական խմբերը և ազգային գումարտակները Կովկասյան ռազմաճակատում (1914–1917 թթ.), Երևան, 1999, էջ 5–107:

88 Տե՛ս Նազարյան Ա., Հայկական զորամասերի կազմավորումը Կովկասյան ճակատում (1914–1918 թվականներ), Երևան, 1999, էջ 196, 199:

թյունների ղեկավարներին հանձնարարվում էր աշխատանքի չընդունել բոլոր նրանց, ովքեր զինապարտության վերաբերյալ վկայական չեն ներկայացնում:

Հիմնվեցին զինվորական հավաքակայաններ, զորակոչի գործերի առյան, որով սկսվեց զինապարտների հաշվառման և ցուցակագրման գործընթացը: 1919 թ. հուլիսի 25-ին հաստատվեց զինաժողովի (զորակոչի) կոմիսարի պաշտոնը: Բանակի զորակոչն իրականացվում էր զինվորական և ներքին գործերի նախարարությունների միացյալ ջանքերով: Գավառներում գործում էին զինվորական վարչություններ: Զորակոչի հավաքակայաններ էին գործում Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Ղարաքիլիսայում, Էջմիածնում, Սուրմալուում, Նոր Բայազետում, Դարալագյազում և Դիլիջանում:

Այնուհանդերձ, նոր ձևավորվող բանակի ամենախոցելի կողմերից մեկը դարձավ դասալքությունը: Պաշտոնական տվյալներով՝ 1919 թ. մարտ–դեկտեմբեր ժամանակահատվածում իրենց զորամասերը լքած զինվորների թվաքանակը կազմել է 5 728 մարդ: Իսկ 1919 թ. հունվար–նոյեմբեր ամիսների ընթացքում ամբողջ Հանրապետությունում 17 665 նորակոչիկներ ու զինապարտներ խուսափել են զորակոչից[99]: Թեև կառավարությունն ու խորհրդարանը դասալքության դեմ պայքարի նպատակով մի շարք օրենքներ ու որոշումներ ընդունեցին՝ սահմանելով նույնիսկ մահապատիժ, սակայն մինչև վերջ այդպես էլ հնարավոր չեղավ կանխել պետական ու ազգային անվտանգության տեսակետից արատավոր այդ երևույթը: 1919 թ. հուլիսին զորակոչի մասին ընդունված օրենքով Հայաստանի Հանրապետությունում 16-ից մինչև 43 տարեկան արական սեռի բոլոր քաղաքացիները ենթակա էին պարտադիր զինվորական հաշվառման: Հայկական բանակում զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը 18 տարի էր, որից 3-ը համարվում էր իսկական, իսկ 15-ը՝ պահեստային ծառայություն: Զինծառայությունից ազատվում էին առողջական վիճակով ոչ պիտանի համարվածները, ինչպես նաև այն դեպքում, եթե զինակոչիկն ընտանիքի միակ կերակրողն էր կամ էլ փոստ-հեռագրատան, երկաթուղու և ոստիկանության աշխատող: Ինչ վերաբերում է սովորող երիտասարդության խնդրին, ապա միջնակարգ դպրոցի սաները զորակոչվում էին դպրոցն ավարտելուց, իսկ բուհերի ուսանողները՝ 20 տարին լրանալուց հետո[100]: Զորակոչի օրենքը տարածվում էր նաև ՀՀ տարածքում ապրող արևմտահայության վրա: Բանակը համալրելիս հաշվի էին առնվում բնակչության ազգային և կրոնական հատկանիշները: Զուտ քաղաքական նկատառումներով մուսուլմանների համար զինվորական ծառայությունը պարտադիր չէր: Որպես կանոն՝ բանակ չէին զորակոչվում նաև այլ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները, բացառությամբ, թերևս, եզդիների, ասորիների և հույների:

Հայաստանի Հանրապետության զինվորական համակարգում ժամանակավորապես պահպանվեցին ռուսական բանակում գոյություն ունեցող սպայական և դասային աստիճանները: Զինվորական աստիճանաբաշխման իրավունքը վերապահված էր կառավարությանը: Բանակում պահպանվեցին ռուսական սպայական կոչումները, աստիճանները, ուսադիրները և տարբերանշանները, իսկ համազգեստը էապես տարբերվում էր: Սահմանվեցին սեփական մարտական շքանշանները՝ «Սուրբ Վարդան զորավար», «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» և այլն:

Հայաստանի զինված ուժերի գործադիր ղեկավար մարմինը զինվորական նախարարությունն էր: Հանրապետությունն իր գոյության 2,5 տարիներին ունեցել է զինվորական չորս նախարար՝ գեներալ Հ. Հախվերդյան (1918 թ. հունիս – 1919 թ. մարտ), գեներալ Ք. Արարատյան (1919 թ. մարտ – 1920 թ. ապրիլ), Ռ. Տեր-Մի-

99 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 89 (մաս I), թ. 71, (մաս II), թ. 348–350:

100 Տե՛ս նույն տեղում, գ. 65, թ. 129:



նասյան (1920 թ. ապրիլ–նոյեմբեր) և Դ. Կանայան (1920 թ. նոյեմբեր–դեկտեմբեր): Նրանք բոլորն էլ անուրանալի ներդրում են ունեցել ազգային բանակի շինարարության ու կայացման գործում:

Բանակային շինարարության ընթացքում ռազմական նախարարության համակարգում ստեղծվեցին մի շարք վարչություններ՝ թիկունքի (համբարակային), հրետանային, ռազմատեխնիկական, ռազմաինժեներական, ռազմաբժշկական, ռազմասանիտարական, ռազմաանասնաբուժական, զորքի բնակբավարարման, գլխավոր վերահսկիչի, ինչպես նաև զինվորական դատարան, ռազմադատախազական հսկողություն և այլն[101]:

Զինված ուժերում ռազմագիտական խնդիրներ մշակելու և լուծելու նպատակով 1919 թ. գարնանը զինվորական նախարարությանն առընթեր ստեղծվեց զինվորական խորհուրդ, որի նախագահ նշանակվեց գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանը: Նա միաժամանակ ստանձնեց Հայոց բանակի գլխավոր հրամանատարությունը՝ սպարապետությունը: Ռազմական խորհրդում ընդգրկված էին բանակի բարձր հրամանատարությունը, նախարարության վարչությունների պետերը և ուրիշներ: Ռազմական խորհրդի նախագահը, դիվիզիայի հրամանատարը և բոլոր վարչությունների պետերը ենթարկվում էին զինվորական նախարարին: Վերջինիս առընթեր ստեղծվեց զինվորական շտաբ, որը հետագայում կոչվեց գլխավոր շտաբ[102]: Նախարարության գլխավոր շտաբը ղեկավարել են ռուսական բանակի կադրային սպա գնդապետ Մ. Զինկևիչը, այնուհետև՝ գնդապետ Աբրահամ Դոլուխանյանը, հետագայում նրան փոխարինեց գնդապետ Ա. Շնեուրը, իսկ ավելի ուշ այդ պաշտոնում նշանակվեց գեներալ Բոգդան Բաղդասարյանը: Գոյություն ուներ նաև զորքերի գլխավոր հրամանատարի շտաբ: 1919 թ. ապրիլին այդ շտաբի պետ նշանակվեց գեներալ Հ. Հախվերդյանը: Երկրի բանակի գլխավոր շտաբին կից հիմնվեց հետախուզական բաժանմունք, որն իրականացնում էր իր ժամանակի համար բավարար ռազմաքաղաքական բնույթի հետախուզական և հակահետախուզական աշխատանք:

Հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը և պայմանները՝ սկսած 1919 թ. սկզբներից՝ Հանրապետության բանակը վերակառուցվեց ու բաժանվեց 7 հիմնական զորախմբերի ու զորաջոկատների, որոնք տեղակայված էին Ալեքսանդրապոլում, ավելի ուշ՝ Կարսում, Ղարանլուղում, Դարալագյազում, Նոր Բայազետում, Շարուրում, Դիլիջանում, Ղարաքիլիսայում և այլուր: Միայն կանոնավոր զորքի հետևակային և հեծյալ գնդերի թվաքանակը հասավ 11-ի[103]:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության բանակի կառուցվածքը և կառավարման համակարգը հիմնականում համապատասխանում էին նախկին ռուսական բանակի կառուցվածքին, սակայն հաշվի էին առնվում տեղական պայմաններն ու յուրահատկությունները: Չպետք է անտեսել նաև այն գործոնը, որ Հայաստանի բանակի սպայական-հրամանատարական համակազմում նկատելի տեղ էին կազմում ռուս և այլազգի սպաները: Ռ. Տեր-Մինասյանի վկայությամբ՝ հայկական բանակում կար շուրջ 400 ռուս զինվորական մասնագետ[104]:

Հայաստանի ռազմական նախարարության համակարգի ստորաբաժանումներից էին նաև դաշտային վարչությունները, տարբեր զորախմբերի շտաբները, քաղաքների, ամրոցների, երկաթուղային կայարանների զինվորական ու պարետային վարչությունները, զո-

101 Տե՛ս նույն տեղում, ֆ. 280, ց. 2, գ. 9, թ. 91:

102 Տե՛ս Հարությունյան Կ.Ա., Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ., Երևան, 2002, էջ 22:

103 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 422, թ. 31:

104 Տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. Է, Երևան, 1990, էջ 332:

բակոչային համաքակայանները և այլն: 1919 թ. գարնանը, երկրի տարածքի ընդլայնմանը զուգընթաց, դրանք արմատավորվեցին և աստիճանաբար ստացան ավարտուն տեսք:

Հանրապետության առանձին շրջանների սահմանների պաշտպանության համար բնակչությունից տեղերում կազմակերպվեցին ռազմամիլիցիոներական տիպի զորամասեր, որոնք կատարում էին երկրապահի դեր: 1919 թ. մայիսին Հայաստանի զորքերի համակարգում կային 1 ռազմամիլիցիոներական գունդ և 2 գումարտակ: Գոյություն ուներ նաև կամավորական զորք, որը հիմնականում տեղակայված էր Իգդիրում:

Ընդհանուր առմամբ հայկական բանակը բաղկացած էր երեք տեսակի զորքերից՝ կանոնավոր, միլիցիոներական (ներքին) և կամավորական (աշխարհազոր), որոնցից գլխավորը, անշուշտ, մշտական կանոնավոր զորքն էր: Կանոնավոր զորատեսակի մեջ մտնում էին ինժեներական, սահմանապահ, բերդապահ, պահակային, զորահանգրվանային ստորաբաժանումները: Գործնական քայլեր ձեռնարկվեցին օդային և ծովային նավատորմի ստեղծման ուղղությամբ: Ստեղծվեցին նոր ստորաբաժանումներ՝ Կարսի ավիաջոկատ (օդային տորմիղ), զրահագնացքների, Սևանա լճի առագաստային նավատորմիղ (շահագործվեց ռազմաբեռնատար «Աշոտ Երկաթ» երկկայմ շարժիչավոր լաստանավը, որն ուներ 1000 փութ բեռնատարողություն, մեկ հրանոթ, 2 գնդացիր և մեկ լուսարձակ), ռադիո և հեռագրային դիվիզիոններ, ավտոմոբիլային զորամաս և այլն:

Բանակի կայացման համար կարևորվում էր նրա նյութատեխնիկական մատակարարումը, որով զբաղվում էր թիկունքի վարչությունը: Նրա ենթակայության տակ էին հանդերձանքի պատրաստման, կոշկակարական, սայլամեխանիկական, սննդի և այլ ձեռնարկություններ ու արհեստանոցներ Ալեքսանդրապոլում, Կարսում, Նոր Բայազետում, Քանաքեռում և այլուր: Հիմնվեցին զենքի (հրետանու, գնդացիրի և հրացանների) վերանորոգման ու մարտական փամփուշտների արտադրության մեխանիկական արհեստանոցներ Քանաքեռում և Ալեքսանդրապոլում: Հայկական բանակը սպառազինված էր հիմնականում ռուսական և Անտանտի երկրների զինատեսակներով: Ռազմասանիտարական ուղղությամբ նույնպես քայլեր ձեռնարկվեցին: Հիմնվեցին Երևանի՝ 430 մահճակալով, և Ալեքսանդրապոլի՝ 220 մահճակալով զինվորական հոսպիտալները: Բացվեցին նաև Կարսի տեղական զինվորական հիվանդանոցը (լազարեթ)՝ 100, Դիլիջանինը՝ 76, Ղամարլուինը՝ 50, Իգդիրինը՝ 50 մահճակալով և այլն[105]:

Հայոց բանակն ամրապնդելու և զարգացնելու նպատակով Հայաստանի կառավարությունը և խորհրդարանը ֆինանսական միջոցների զգալի մասը հատկացնում էին ռազմապաշտպանական նպատակներին: ՀՀ կարճատև գոյության ընթացքում բանակն ունեցել է որոշակի քանակական աճ: Ըստ արխիվային նյութերի և տարբեր հուշագրերների ու հեղինակների հրապարակած փաստական տվյալների՝ 1918 թ. աշնանը հայկական բանակի անձնակազմի թվաքանակը հասել է 16 հազարի, 1919 թ. հուլիսին՝ 18 հազարի, 1920 թ. հունվարին՝ 25 հազարի, իսկ 1920 թ. աշնանը (նոյեմբերին)՝ շուրջ 40 հազար զինվորի ու սպայի՝ կամավորական խմբերի հետ միասին: Այդ թվաքանակի մեջ ներառված են նաև թիկունքային և բանակին սպասարկող օժանդակ ուժերը՝ ծառայողներ, բեռնակիրներ, կառապաններ, վարորդներ, սպասավորներ և ուրիշներ:

Յուրաքանչյուր բանակի ամրության գլխավոր հենասյուներից մեկը, անշուշտ, սպայակազմն է: Սեփական զինվորական կադրեր պատրաստելու և վերապատրաստելու նպատակով գլխավոր շտաբին կից բացվեցին սպայական դասընթացներ, ինչպես նաև սպայական նախապատրաստական դպրոց: Ծրագրվել էր Կարսում բացել ռազմական գիմնազիա:

105 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 (մաս I), թ. 16:



Հայկական բանակը բավականաչափ համալրված էր սպայակազմով: Զինված ուժերում ծառայում էին 33 գեներալներ, մինչև 250 գնդապետներ: Սպայության ընդհանուր թվաքանակը (տարբեր տվյալներով) կազմում էր 1500-ից մինչև 2500 մարդ: Սպայակազմից մի քանի հարյուրը այլազգիներ էին, իսկ մյուսները՝ փաստորեն նախկինում ռուսական բանակում ծառայած հայեր, որոնց մեջ բավականին ուժեղ էին նստած ռուսական ոգին, բարքերն ու հոգեբանությունը: Այդ իսկ պատճառով կարևորվում էր հայոց անկախ պետականությանը նվիրված, ազգային հոգեբանությամբ սպայակազմի ձևավորումը: Բանակում գործում էին գնդային քահանաներ:

Հայոց բանակի ազգայնացման գործում առաջնահերթ խնդիր դարձավ մայրենի լեզվի արմատավորումը բանակային համակարգում, որտեղ իշխում էր ռուսերենը: Ի կատարումն պետական լեզվի մասին օրենքի՝ խնդիր դրվեց մի քանի ամսվա ընթացքում ռազմական նախարարության և բանակային համակարգում գրագրությունն ու գործավարությունը փոխարինելու հայերենով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բարձր հրամանատարության և սպայակազմի մի զգալի մասը (այդ թվում՝ շատ հայազգի գեներալներ ու սպաներ) հայոց լեզվին չէին տիրապետում, բացվեցին վեցամսյա հատուկ դասընթացներ: Զինվորական շտաբին կից ստեղծվեց տերմինաբանական և ձևաթղթերի պատրաստման հանձնախումբ: Անշուշտ, բանակում մայրենիի արմատավորման խնդրում ցուցաբերվեց շտապողականություն, ինչի հետևանքով հայերենին չտիրապետող մի քանի տասնյակ այլազգի արհեստավարժ սպաներ ու աստիճանավորներ ազատվեցին ծառայությունից:

Հայաստանի բանակը ապաքաղաքականացված էր: Օրենքով այնտեղ արգելվում էր որևէ կուսակցական կառույցի գոյությունը: ՀՀ ընտրությունների մասին օրենքով իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողներն իրավունք չունեին մասնակցելու ոչ միայն խորհրդարանի, այլև զեմստվոների և քաղաքային ինքնավարության մարմինների ընտրություններին[106]: Դա արվում էր բանակը ապակուսակցականացնելու և զինվորականությանը քաղաքական պայքարից հեռու պահելու նպատակով:

Այսպիսով՝ հայոց պետականության կազմավորմանը զուգընթաց ձևավորվեց նաև նրա ազգային բանակը՝ երկիրը և պետությունը արտաքին վտանգներից պաշտպանող հիմնական ուժը:

106 Տե՛ս նույն տեղում, ֆ. 404, ց. 1, գ. 62, թ. 1: Հայկական բանակ, 1998, թիվ 4, էջ 10:

**Աղբյուրը՝** *«Հայոց պատմություն. նորագույն ժամանակաշրջան (1918-1945)»*, հ. IV, գիրք I, խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, «Զանգակ-97» հրատ., Երևան, 2010, էջ 44-51: